եւ անօրէն Օլախն, իբրեւ զմարախ անթիւ բազում էին. և մինչ Լաքին եհաս ի Սեչոմն, ահա գուժ հասուցին նմա՝ եթէ զՏեսրոթն սպանեցին, և սա իբրեւ լուաւ՝ այլ ոչ գնաց, և դարձաւ ելաւ երկրէն անվնաս։

1564. Թվ. ՌԺԳ. Պիղծ և անօրէն Օլէքչանտր՝ զոր էր փախստական, ելեալ գնաց ի Տաճկաստան, և անդ եկաց մինչեւ երկու ամ. և յորժամ զՏեսրոթն այս անիրաւ Տոմշան սպանեց իւր ձեռամբ, համբաւն գնաց այս Ալէքչանտրին, անդ ուր էր բնակեալ ի Տաճկաստան. և իսկոյն ել և եկն առ խոնդիքարն. և խոնդիքարի որդոյ միջնորդութեամբ աղաչեց որ կրկին նստուցանէ զինքն ի վերայ իշխանութեան Օլախաց երկրի վրայ. և խոնդիքարն վասն որդոյն խնդրուածոցն՝ հրամայեաց նմա որ գայ և նստի ի պարոնութիւն իւր։ Եւ յորժամ եկն և եհաս Յիպրայիլ՝ եղբն Տունային, և թխտեր զրկեց այդ անիրաւ Տոմշային և իշխանացն ամենին, եթէ, Ահա եկայ, առ իս եկէք ընդ առաջ իմ, զի լինիմ ձեզ պարոն։ Եւ նոքա ընդդէմ նորա պատասխանի ետուն, եթէ, Մեզ պէտք չես, և ոչ զքեզ կամի երկիրն ի պարոնութիւն. ընդ որ եկեալ ես՝ դարձեալ ընդ նոյն ճանապարհ գնա։ Եւ նա դարձեալ զրկեց ի խոնդիքարն, եթէ Օլախաց պարոնայք զիս չեն կամենար ի պարոնութիւն. և խոնդիքարն հրաման ետուր Դաթրի (Թաթարաց) խանին, որ գայ իւր հեծելով, և առնու զնա տանի և նստուցանէ ի պարոնութիւն։ Եւ Դաթրի խանն եկաւ 50,000 հոգով, և էառ զայդ պիղծ Ալէքչանտրն և եմուտ ի երկիրն. և նստոյց զնա ի պարոնութիւն, և ինքն դարձաւ, զբազումս գերի վարելով և աւար առնելով զանասունս զամենայն, զարջառ և զոչխար, զձի և զմատակ երամով, բազում և անթիւ, մինչ որ զկէս երկրին զբարութիւն և զմարդիկ եհան և տարաւ. վասն զի խոստացեալ էր այս գոռոզն՝ Դաթրի խանին, եթէ որչափ լինիս գերի առնուլ և տանել, հրաման քո լինի, բայց զիս հաստ իմ պարոնութեանս։ Եւ յորժամ եմուտ Դաթարն ի երկիր, նայ այս միւս պարոն Տոմշա անուն կամեցաւ ընդդէմ գնալ և պատերազմել ի հետ Դաթրին. յետոյ իւր իշխանքն ցրուեցին զՏոմշային զխորհուրդն, և չպատերազմեցան. և ելեալ ի երկրէն իւրեանց՝ փախստական գնացին ի Պուչաչ (Buchaczow?) ի Նեմիչի աշխարհն, ամենայն բարութեամբն իւրեանց, կանամբ և ընդանեօք, զաւակօք. բայց եթէ կռիւ տվել էին ի հետ Դաթրին՝ նա պիտի յաղթէին զԴաթարն։ Եւ յորժամ եկին ի վերագոյն գրեալ քաղաքն ի Պուչաչ, նա այդ քաղաքին իշխանն զնոցա զամենայն ինչ որ ունէին ընդ ինքեանս՝ էառ, և ի բերդն մտոյց, և զինքեանս ետ ի պահապանաց ձեռն, մինչ որ ազդեցուսցէ զբանն Թագաւորին։ Եւ յորժամ ազդեցին Թագաւորին՝ ի նոյն ժամ Թագաւորն հրամայեց, զի զամենեսեան տանիցեն Իլով քաղաքն, զոր և տարան և փակեցին զնոսա ի մէջ բերդին։ Յետոյ ի խոնդիքարէ չաւուշ եկաւ ի Թագաւորն՝ վասն նոցա, զի կենդանի տաս զնոսա ի չաւուշն՝ որ տանի ի խոնդիքարն։ Եւ Թագաւորն ոչ կամեցաւ. վասն զի այդ սահմանք ոչ գոյ ի այս Թագաւորութիւն, զի զայնպիսի չարագործն